

ԱՆԱԴԻՏ ԴԱՇՅԱՆ

**Չլսող երեխաների խոսքի և հաղորդակցման
զարգացումը ժեստաբառային երկլեզու
ուսուցման մեթոդով**

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ 2017

ՀՏԴ 376(07)
ԳՄԴ 74.3ց7
Դ 194

Երաշխավորված է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության ֆակուլտետի 28.04.2017-ի նիստի որոշմամբ

Գրախոսներ՝

Ռ. Ն. Ազարյան, մ.գ.դ., պրոֆեսոր

Ա. Վ. Մանուկյան, մ.գ.թ., դոցենտ

ԴԱՇՅԱՆ Ա. Վ.

Դ 194 Չլսող երեխաների խոսքի և հաղորդակցման զարգացումը ժեստաբառային երկլեզու ուսուցման մեթոդով: Ուսումնամեթոդական ձեռնարկ // Ա. Դաշյան .-Եր.: 2017, 62 էջ:

ՀՏԴ 376(07)

ԳՄԴ 74.3ց7

Ձեռնարկում ներկայացված են չլսող երեխաների խոսքի և հաղորդակցման զարգացման ուղիները՝ ժեստաբառային երկլեզու ուսուցման միջոցով: Ձեռնդված են դիմախաղի և շարժումների արտահայտչականությանը, հաղորդակցման երկու համակարգերի բառապաշարի, կապակցված խոսքի զարգացմանն ուղղված խաղեր, վարժություններ և առաջադրանքներ:

Ձեռնարկը նախատեսված է լսողության խանգարում ունեցող երեխաների հետ աշխատող հատուկ մանկավարժների, ուսուցիչների համար: Այն կարող է օգտակար լինել նաև հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև լսողության խանգարում ունեցող երեխաների ծնողների համար:

ISBN 978-9939-50-380-6

© ԴԱՇՅԱՆ Ա. Վ., 2017



յուրաքանչյուր երեխայի համար

Սույն գրքույկի տպագրությունը իրականացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը) երեխայի իրավունքների գծով համաշխարհային առաջատարն է, որի գործունեության նպատակն է՝ յուրաքանչյուր երեխայի համար ամենուրեք ապահովել հավասար հնարավորություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ամենակարիքավոր և խոցելի երեխաներին:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի և կազմակերպության գործունեության մասին ավելին իմանալու համար կարող եք այցելել՝ www.unicef.am և www.unicef.org կայքերը կամ հետևել մեզ հետևյալ սոցիալական հարթակներում՝

 [Facebook.com/UNICEFArmenia](https://www.facebook.com/UNICEFArmenia)

 [Instagram.com/UNICEF_Armenia](https://www.instagram.com/UNICEF_Armenia)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԲԱԺԻՆ 1 Դիմախաղի և շարժումների արտահայտչականության զարգացմանը միտված խաղեր և վարժություններ.....	9
ԲԱԺԻՆ 2 Բառապաշարի զարգացմանը միտված խաղեր և վարժություններ ..	13
ԲԱԺԻՆ 3 Չանելուկներ.....	35
ԲԱԺԻՆ 4 Կապակցված խոսքի զարգացմանը միտված տեքստեր և վարժություններ ..	38
ԲԱԺԻՆ 5 Չիշողության և ուշադրության զարգացմանն ուղղված խաղեր և վարժություններ.....	45
ԲԱԺԻՆ 6 Բառաշղթաներ և խաչբառեր.....	54
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	61

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լսողության խանգարում ունեցող երեխաների խոսքի ձևավորումը, հաղորդակցման ունակությունների, հոգեկան գործընթացների զարգացումը, ինչպես նաև այդ երեխաների սոցիալականացումը սուրդոմանկավարժության գլխավոր խնդիրներից են:

Տվյալ ոլորտում կարևոր է նաև բառային խոսքի ուսուցման արդյունավետության բարձրացումը: Մասնագետները նշում են, որ խոսքի ձևավորման բարդ խնդրի լուծումն էապես պայմանավորված է հաղորդակցման միջոցների և ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ (Է. Գ. Речуцкая, 2004; Ե. Դ. Корсунская, 2007; Ա. Վ. Մանուկյան, 2012): Սակայն սուրդոմանկավարժությունը չի կարող անտեսել այն փաստը, որ չլսողները միմյանց հետ հիմնականում հաղորդակցվում են ոչ վերբալ միջոցներով՝ ժեստերով:

Հայտնի է, որ բացի խոսքի հիմնական ձևերից՝ բանավոր և գրավոր տեսակներից, գոյություն ունեն նաև այլ տարատեսակներ, դրանք են՝ մատնախոսությունն ու ժեստերի լեզուն (Վ. Գ. Խալաթյան, 1973; Գ. Ա. Заицева, 2000; Ա. Վ. Դաշյան, 2007, 2010):

Ժեստերի լեզվի կիրառումը չլսողների ուսուցման գործընթացում սուրդոմանկավարժության ամենավիճահարույց խնդիրներից մեկն է: Պէնոթ է արդյոք խոսքի ուսուցման ընթացքում բանավոր և գրավոր տեսակների հետ համատեղ կիրառել ժեստերը: Այս հարցը միշտ եղել է վիճելի, և այն վիճահարույց է նաև Հայաստանում:

Չլսողների հաղորդակցական համակարգը բավականին բարդ և ինքնատիպ է. այն իր մեջ ներառում է մատնախոսություն, ժեստերի լեզվի երկու տեսակներ (ազգային և պատճենող) և բանավոր խոսք: Արդյունքում ձևավորվում է յուրօրինակ ժեստաբառային երկլեզվություն: Հաղորդակցման ընթացքում այդ երկու համակարգերը՝ բառայինը և ժեստայինը, փոխներգործում են միմյանց վրա: Ժեստաբառային երկլեզվությանը բնորոշ են՝ հաղորդակցական գործառույթների բաշխումը, տիրապետման տարբեր մակարդակները, փոխադարձ ազդեցությունը (Մ. Brennan, 1981; Գ. Ա. Заицева, 2000; Վ. Գ. Խալաթյան, 2001; Ա. Վ. Դաշյան, 2007, 2010): Ժեստաբառային

երկլեզվության ինքնատիպությունը պայմանավորված է ինչպես լսողության խանգարման գործոնով, այնպես էլ չլսող երեխայի զարգացման առանձնահատկությամբ:

Մասնագետների վկայությամբ՝ ժեստերի լեզվի կիրառումն ուսումնական գործընթացում վերացնում է հաղորդակցության պատնեշը ուսուցիչների և աշակերտների միջև, ստեղծվում են անկեղծ, վստահելի հարաբերություններ, ապահովվում է հուզականություն (Prillwitz S., 1998; Зайцева Г. Л., 2001): Վերացնելով հաղորդակցական արգելքները՝ կարելի է զգալիորեն մեծացնել ուսումնական նյութի ծավալը, ինչպես նաև արագացնել գիտելիքների փոխանցման և դրանց ընկալման՝ աշակերտների հնարավորությունները: Սա, իր հերթին, հնարավորություն է տալիս ընդլայնել այն առարկաների և ոլորտների շրջանակը, որոնք նախկինում անհասանելի էին չլսողների համար (օրինակ՝ օտար լեզուների), քանի որ այս առարկաների՝ բանավոր խոսքի միջոցով դասավանդումը չափազանց բարդ էր:

Ուսումնական գործընթացում պահանջվում է գտնել բանավոր խոսքի և ժեստերի լեզվի կիրառման օպտիմալ հարաբերակցությունը, ժեստերի լեզվի հիման վրա ամրակայել և զարգացնել կրթական գործընթացի դիդակտիկ հիմքերը, ստեղծել սուբյեկտիվացման կարգիչների պատրաստման նոր դպրոց՝ երկլեզու կրթական համակարգում դասավանդման համար, զարգացնել լսողության խանգարում ունեցող երեխաների երկլեզու ուսուցման սուբյեկտիվացման կարգիչական դիդակտիկ և մեթոդական մոտեցումները:

Զլսող երեխաների ժեստաբառային երկլեզու ուսուցման համակարգի առանձնահատկությունը պահանջում է մանկավարժական առանձնահատուկ պայմանների ստեղծում: Այն ենթադրում է երկու՝ ժեստերի և հնչյունային, լեզուների կիրառում ուսուցման գործընթացում: Որպես հաղորդակցման և մանկավարժական ազդեցության հավասար միջոցներ՝ անհրաժեշտ է իրականացնել ժեստերի և հնչյունային լեզուները կրողների սերտ համագործակցություն, ստեղծել հարգալից և բարյացակամ վերաբերմունք միմյանց հանդեպ: Պետք է նշել, որ նման իրավիճակը չի ստեղծվում միանգամից: Այն ձևավորվում է աստիճանաբար, քանի որ ինչպես լսող ծնողները և ուսուցիչները, այն-

պես էլ չլսող երեխաները երկար տարիներ դաստիարակվել են ժեստերի լեզվի անլիարժեքության և անբավարարության պայմաններում և այդ մտայնությամբ:

Չլսող երեխաների բառային խոսքի և ժեստերի լեզվի նպատակային ուսուցումն անհրաժեշտ է սկսել վաղ տարիքից: Այս երկու հաղորդակցման համակարգերը, ձևավորվելով և զարգանալով, պահպանում են իրենց հիմնական նշանակությունը չլսողների հաղորդակցման և ճանաչողական գործունեության մեջ: Այդ երկու լեզվական համակարգերի միջև գոյանում է կենդանի փոխազդեցություն, ինչի արդյունքում էլ ձևավորվում է ժեստաբառային երկլեզվությունը: Բառային խոսքը նպաստում է ժեստերի լեզվի հարստացմանը, իսկ ժեստերի լեզուն իր հերթին հանդես է գալիս որպես բառային խոսքի ընկալման և ուսուցման հիմք (Բ. Ա. Заўцэва, 2000; Т. Г. Богданова, 2002, Ա. Վ. Դաշյան, 2007, 2009):

Դասերի ընթացում երկլեզու ուսուցման մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռում աշակերտներին փոխանցելու ավելի մեծ քանակությամբ տեղեկատվություն, այդ կերպ հեշտանում է ընկալվող նյութի հասկացումը և վերլուծությունը:

Երկլեզու ուսուցման մեթոդն անհրաժեշտ է կիրառել՝

- Նոր հասկացությունների ձևավորման,
- բառի իմաստի բացատրության,
- տեղեկատվության փոխանցման,
- էքսկուրսիաների անցկացման,
- մանկական կոնֆլիկտների պարզաբանման և վերլուծության,
- չլսող ծնողների հետ շփման ժամանակ և այլ պայմաններում:

Ուսումնասիրությունները և մանկավարժական փորձը վկայում են, որ երեխաներն ավելի լավ են կատարում առաջադրանքները, լավ են հիշում բառային նյութը, եթե այն ամրակայվում է ժեստերի միջոցով: Պետք է նշել, որ այդ սկզբունքի կիրառումը բարձրացնում է երեխաների՝ հետաքրքրությունը ուսումնական առարկայի և նյութի նկատմամբ, քանի որ նրանք լավ են հասկանում, թե ինչ է իրենցից պահանջվում:

Նրանք դառնում են առավել վստահ, ինչը հանգեցնում է նրանց ինքնագնահատականի բարձրացմանը: Երկար տարիների որոնումների և դիտարկումների ընթացքում հասկանալի դարձավ, որ ժեստերի լեզուն լիարժեք լեզվաբանական համակարգ է, և այն պետք է կիրառվի ոչ միայն որպես հաղորդակցման, այլև որպես ուսուցման մեթոդ և միջոց: Ժեստերի լեզուն կարող է իր գործուն ներագդեցությունն ունենալ հմուտ մանկավարժի ձեռքերում, ով լիարժեք կերպով տիրապետում է երկու լեզուներին և վստահ է, որ այդ լեզուների հավասարաչափ կիրառումը չլսող երեխաների ուսուցման հաջողության գրավականն է:

«Չլսող երեխաների խոսքի և հաղորդակցման զարգացումը ժեստաբառային երկլեզու ուսուցման մեթոդով» ուսումնական ձեռնարկը նախատեսված է տարրական (2-4-րդ դասարան) դպրոցի չլսող երեխաների հետ աշխատող մանկավարժների համար: Ձեռնարկում ընդգրկված խաղերն ու վարժությունները նախատեսված են գրաճանաչ երեխաների համար: Ընտրված են վարժություններ, խաղեր, հանելուկներ, խաչբառեր՝ նպատակամիտված բառապաշարի զարգացմանը, վարժություններ և տեքստեր, որոնք միտված են կապակցված խոսքի, ինչպես նաև հիշողության և ուշադրության զարգացմանը: Ձեռնարկում առաջադրանքներն ու վարժությունները տրված են ըստ տարբեր բարդության և նախատեսված են խոսքի զարգացման տարբեր մակարդակ ունեցող երեխաների համար, դրանք կարող են կիրառվել նաև այն երեխաների համար, ովքեր չեն տիրապետում ժեստերին և ուսուցանվում են ներառական կրթություն իրականացնող դպրոցներում:

ԲԱԺԻՆ 1

ԴԻՄԱԽԱԴԻ ԵՎ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ
ԱՐՏԱՅԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆԸ
ՄԻՏՎԱԾ ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԴԻՄԱՆԱՂԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր հույզի համապատասխանում է որոշակի դիմախաղ:

- Ուտում ենք թթու կիտրոն: Ծամածռում ենք դեմքը:
- Ջղայնանում ենք չարածճի տղայի վրա: Կիտում ենք հոնքերը:
- Հանդիպում ենք ընկերուհուն: Ժպտում ենք:
- Վախենում ենք արջից: Բարձրացնում ենք հոնքերը, լայն բացում աչքերը, բացում բերանը:
- Արտահայտում ենք զարմանք: Լայն բացում ենք աչքերը, բարձրացնում հոնքերը:
- Նեղանում ենք. իջեցնում ենք շուրթերի ծայրերը:

2. «ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ»

Տարբերակ 1. Երեխաներին տրվում են լուսանկարներ (թվով՝ 8-10), որոնցում պատկերված են կենդանիներ՝ հուզական տարբեր վիճակներ արտահայտող դեմքերով: Երեխաները պետք է այդ նկարները դասակարգեն ըստ համապատասխան վիճակների (տխուր, ուրախ, վախեցած, խղճահարված): Առաջադրանքը կատարելուց հետո նրանք պետք է համապատասխան հուզական վիճակները ցույց տան ժեստերով, այնուհետև դրանք անվանեն բառերով:

Տարբերակ 2. Երեխաներին առաջարկվում է դիտել նկարներ, որտեղ պատկերված են դեմքի տարբեր արտահայտությամբ մարդիկ: Երեխաները պետք է բացատրեն, թե ինչու են տխրում, ուրախանում կամ զայրանում այդ մարդիկ: Օրինակ՝ տղան լաց է լինում, որովհետև իրեն նեղացրել են: Երեխան ուրախ է. մայրիկը նրան խաղալիք է նվիրել:

3. ՀՈՒՅՉԵՐԻ ԱՇԽԱՐՀ

Երեխաներին առաջարկվում է դիտել տարբեր իրավիճակներ պատկերող սյուժետային նկարներ:

- **Ուրախության գագուռ:** Երեխաները գնում են լիճ՝ լողալու: Արևոտ եղանակ է: Երկինքը պարզ է, ջուրը՝ թափանցիկ ու տաք: Ահա արդեն ջրի մեջ են. ինչքան լավ է: Երեխաները շատ ուրախ են:

- **Վախի գգացում:** Երեխաներն անտառում են: Նրանք սունկ և հատապտուղներ են հավաքում: Հանկարծ մի մեծ արջ են տեսնում: Նրանք սարսափահար փախչում են: Երեխաներն արագ վազում են, և քանի որ արջն արդեն հեռու է, նրանց այլևս վտանգ չի սպառնում:
- **Խղճի գգացում:** Երեխաները զբոսնում են այգում: Հանկարծ տեսնում են մի փոքրիկ անօգնական փիսիկի: Նա նստել ու տխուր մլավում էր: Երեխաները խղճացին փիսիկին, բերեցին տուն և կաթ տվեցին:
- Օգտագործելով դիմախաղ և արտահայտիչ շարժումներ՝ ժեստերի լեզվով վերարտադրել համապատասխան հույզը:

4. ԱՔԱՂԱՂԸ

Մանկավարժը երեխաներին առաջարկում է դիտել նկարներ, որոնցում պատկերված են աքաղաղներ՝ տարբեր «տրամադրությամբ»: Երեխաները պետք է վերարտադրեն աքաղաղի շարժումները և դիմախաղով արտահայտեն համապատասխան տրամադրությունը:

Հայարտ աքաղաղ: Աքաղաղը քայլում է՝ գլուխը բարձր պահած, թափահարելով թևերը: Ժամանակ առ ժամանակ կանգնում է, իջեցնում գլուխը և ցորեն կտցում: Ապա նորից ուղղվում է և, գլուխը հետ գցելով, բարձր երգում է. «Ծուղ-րու-դրև»:

Տխուր աքաղաղ: Աքաղաղը տխուր, գլուխն իջեցրած, կամաց երգում է. «Ծուղ-րու-դրև»: Նրան առաջարկում են ջուր խմել, ցորեն կտցել, սակայն հրաժարվում է: Երեխաների հետ միասին քննարկվում է, թե ինչու է աքաղաղը տխուր (հիվանդ է, տխրել է, որովհետև արև չկա, ի՛նչ է պատահել նրան): Երեխաները քննարկում են յուրաքանչյուր տարբերակը և մտածում, թե ինչպես պետք է օգնեն աքաղաղին: Այդ ամենը ցուցադրվում է շարժումների և դիմախաղի միջոցով:

5. ՓԻՍԻԿԸ

Մանկավարժը երեխաներին ցուցադրում է թեմային համապատասխանող մի քանի նկար և առաջարկում քննարկել այդ իրավիճակները:

Փխսիկը հիվանդ է: Փխսիկը կծկվել է, թաթը դրել ցավող տեղին: Դիմախաղով արտահայտել թախիծ: Զայլել անկյունից անկյուն:

Երեխաներին առաջարկվում է մտածել, թե ինչպես կարելի է օգնել փխսիկին: Երեխաները պետք է արտահայտիչ շարժումների միջոցով կատարեն խաղի յուրաքանչյուր մասը:

Փխսիկն առողջացել է: Ուրախությունն արտահայտել թռչկոտելով, ցատկելով, պտտվել՝ ժպիտը երեսին:

6. ԻՄԱՑԻՐ՝ ՈՎ ԵՄ ԵՍ

Նպատակը: Սովորեցնել ընդգծել առարկայի, կենդանու կամ անձի կարևոր բնութագրերը, զարգացնել ստեղծագործական հմտությունները և ասոցիատիվ մտածողությունը, ինչպես նաև օգնել երեխային՝ հաղթահարելու ամաչկոտությունը:

Խաղի ընթացքը: Նախապատրաստված քարտերի վրա պատկերված են մարդիկ, կենդանիներ: Մասնակիցներից ընտրվում է խաղավար: Նա մոտենում է սեղանին, որտեղ դրված են քարտեր, և ընտրում դրանցից որևէ մեկը, ապա վերադառնում սենյակի կենտրոն: Մյուս երեխաները նրան հարց են տալիս. «Ո՞վ ես դու»: Առաջին խաղացողը ներկայացնում է, թե ինչ է պատկերված ընտրված քարտի վրա՝ կիրառելով դիմախաղ և համապատասխան շարժումներ (բառերի օգտագործումն արգելված է): Այն խաղացողը, ով ճիշտ է գուշակում, դառնում է խաղավար, և խաղը շարունակվում է:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ամաչկոտ երեխաները հիմնականում պասիվ են, ուստի նրանց մասնակցությունը խաղին պետք է ապահովի մեծահասակը:

ԲԱԺԻՆ 2

**ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ
ԽԱՂԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բառային աշխատանքը ներառում է՝

- Նոր բառերի և ժեստերի իմաստի բացատրություն,
- ծանոթ բառերի և ժեստերի հոմանիշների, հականիշների ընտրություն,
- բառերի կիրառում բառակապակցություններում և նախադասություններում:

Բառապաշարի զարգացման համար կիրառվում են խաղեր, վարժություններ և բառային առաջադրանքներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Դիտի՛ր նկարը և ցրյց տուր համապատասխան ժեստը: Յուրաքանչյուր նկարի տակ գրի՛ր բառը:







Ինչե՛ր են դրանք: Գրի՛ր ընդհանուր անունը:

(Երեխաներին առաջարկվում են նկարներ, որոնց վրա պատկերված են խաղալիքներ՝ գնդակ, արջուկ, մեքենա, սավակ, տիկնիկ և այլն):

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

ա) Միացրո՛ւ վանկերը և ստացի՛ր բառ:

Գրի՛ր ստացված բառերը և ցրյց տուր համապատասխան ժեստերը:

Կեն		
Գե		
Նա		

Գրի՛ր ընդհանուր անունը:

բ) Միացրո՛ւ վանկերը՝ ըստ գույների: Ստացի՛ր բառեր և գրի՛ր դրանք:

ԳԵ

ՑԻԿ

ՂԵ

ԽԵ

ԼԱ

ԳՈՒՅՆ

ՎԱՐ

ԴԱ

ՑԻ

Ցո՛ւյց տուր բառերին համապատասխանող ժեստերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3

Կարդա՛ տրված բառերը (*խաղալիք, զամբյուղ, ջուլթակ, ծաղիկ, սկյուռ*), ցո՛ւյց տուր ժեստերը: Դիտի՛ր նկարները և դրանց մոտ տեղադրի՛ր համապատասխան անունները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4

Ճի՛շտ դասավորի՛ր տառերը և ստացի՛ր թռչունների անուններ:

1. կ ա պ ա թ
2. վ ա ղ ա ն ի
3. ե բ ա զ
4. դ ա բ
5. ա ղ ա ք ա ղ

Գրի՛ր ճիշտ անունները և ցո՛ւյց տուր համապատասխան ժեստերը:

ԱՌԱՋԱՂԱՆՔ 5

Ճի՛շտ տեղադրիր բաց թողնված տառը (*տ, բ, գ, թ, տ, փ*) և ստացի՛ր նոր բառ.

Տառ - .առ

Շուն - . ուն

Սար - . ար


Սալոր – սա . որ

Կարապ –կարա.

Տրված և ստացված բառերն արտահայտի՛ր ժեստերով:

ԱՌԱՋԱՂԱՆՔ 6

Կազմի՛ր բառեր:



Ցո՛ւյց տուր բառերի համապատասխան ժեստերը: Կազմի՛ր բառակապակցություն:

ԱՌԱՋԱՂԱՆՔ 7

Գրի՛ր նկարի անունը, մտածի՛ր՝ ինչպես միացնել բառերը և ստանալ նոր բառ:

(արևածաղիկ)

(ծաղկակաղամբ)

Ժեստերով արտահայտի՛ր նոր ստացված բառերը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8

Երեխաներին տրվում են բառաքարտեր, որոնցից մեկի վրա գրված է կենդանու անունը, իսկ մյուսի վրա՝ նրան բնութագրող հատկանիշը: Երեխաները ցույց են տալիս համապատասխան ժեստերը: Այնուհետև պահանջվում է իրար միացնել համապատասխան բառաքարտերը:

Նապաստակ արագավազ

Փիղ վախկոտ

Աղվես հսկա

Ջայլամ խորամանկ

Տրված բառերով կազմել բառակապակցություններ: Արտահայտել բառակապակցությունները ժեստերով:

Օրինակ՝ *խորամանկ աղվես:*

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9

Տարբերակ 1. Երեխաներին առաջարկվում է տրված բառով և ցուցադրվող ժեստի օգնությամբ կազմել բառակապակցություններ: Օրինակ՝ *ապակյա ... ժեստ (ափսե)*

Բառեր

Ժեստեր

կարմիր ... ծաղիկ

քաջ ... առյուծ

հսկա ... փիղ

խորամանկ ... աղվես

Գրել բառակապակցությունները: Ընտրել որևէ բառակապակցություն և կազմել նախադասություն: Թարգմանել նախադասությունը ժեստերի լեզվով:

Տարբերակ 2. Առաջարկված բառերը միացնել սլաքներով և կազմել բառակապակցություններ.

համեստ	լեռներ
ճերմակ	վարդ
գեղեցիկ	աղջիկ
բարձր	ձյուն

Թարգմանել բառակապակցությունները ժեստերի լեզվով և դրանցից երկուսը գործածել նախադասությունների մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1

Երեխաներին տրվում են բառաքարտեր, որտեղ գրված են գծիկով բառեր: Մանկավարժը բացատրում է բառերի իմաստները՝ գործածելով ժեստեր:

Այնուհետև երեխաներին առաջարկվում է սլաքներով իրար միացնել բառերը և դրանց համարժեք իմաստները:

գիշեր - ցերեկ	բազմաթիվ, շատ
անթիվ - անհամար	ճանճրալի
երկար - բարակ	ամբողջ օրը
երգել - պարել	զրուցել
ասել - խոսել	ուրախանալ, գվարճանալ
ծլել - ծաղկել	սովորել
գրել - կարդալ	մեծանալ, աճել

Ընտրել գծիկով գրվող երկու բառ և կազմել նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2

Երեխաներին տրվում են *հմ*, *հնչ*, *ինչպիսիք* և *ինչ անել* հարցերին պատասխանող բառեր. *բժիշկ*, *ոտնահետք*, *կենդանի*, *հոգատար*, *անձրև*, *արթնանալ*, *մարզիկ*, *խելացի*, *կառուցել*, *գեղեցկադեմ*, *ածեցնել*, *ծարպիկ*, *պատրաստել*, *լուսավոր*, *միջատ*, *կահույք* և այլ բառեր:

Այդ բառերից պետք է՝

ա) առանձնացնել՝

- անձ ցույց տվող երկու բառ _____
- առարկա ցույց տվող երկու բառ _____
- առարկայի հատկանիշ ցույց տվող երկու բառ _____
- գործողություն ցույց տվող երկու բառ _____

բ) ընտրել 4 բառ, թարգմանել ժեստերով և դրանցով կազմել նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3

Տրված բառերով կազմել *հնչ անել* հարցին պատասխանող նոր բառեր:

<u>հնչ</u>	<u>հնչ անել</u>
երգ	երգել
պար
խաղ
սեր
ծիծաղ

Թարգմանել ժեստերով, գործածել ժեստային նախադասություններում:

Գրված բառերից երկուսը գործածել նախադասությունների մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4

Տրված բառերը գրել համապատասխան սյունակներում.

Մարդ, եղբայր, խոսել, ուսուցչուհի, սիրտ, աղաչել, մարդկային, վերանորոգել, սրբել, երջանկություն, երկներանգ, սուրբ, զգույշ, հիշել, համբույր, ազատել, թանկ, անշնորհակալ, զվարճանալ:

Ո՞վ Ի՞նչ Ինչպիսի՞նք Ի՞նչ ա ն է լ

Թարգմանել ժեստերով:

Յուրաքանչյուր սյունակից ընտրել մեկական բառ և կազմել նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5

Տարբերակ 1. Ուսուցիչը երեխաներին բաժանում է 7 նկար: Երեխաները պետք է գրեն նկարներին համապատասխան անունները, այնուհետև յուրաքանչյուր բառի դիմաց՝ դրա հատկանիշները:

Օրինակ՝ արև - պայծառ, կլոր, դեղին և այլն:

Տարբերակ 2. Ուսուցիչը ցույց է տալիս ժեստեր: Երեխաները պետք է գրեն դրանց համապատասխան բառերը, այնուհետև՝ բնութագրող հատկանիշը: Երեխաներին առաջարկվում է նաև գրել այդ հատկանիշն արտահայտող բառի հականիշը:

Օրինակ՝ ծաղիկ–գեղեցիկ,

գեղեցիկ – տգեղ,

լեռ – բարձր,

բարձր – ցածր և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6

Գրի՛ր բառերը հոգնակի թվով:

ծառ -	դուռ -	քար -
սեղան -	աթոռ -	աղջիկ -
մեքենա -	աշակերտ -	պահարան -

Արտահայտել բառերը ժեստերով՝ կիրառելով հոգնակիություն արտահայտող լրացուցիչ ժեստեր:

ԽԱՂԵՐ

1. Անվանի՛ր մեկ բառով

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ, բառաքարտեր:

Խաղի ընթացքը: Երեխաներին տրվում են նկարներ, որոնց վրա պատկերված են բանջարեղենի տեսակներ՝ սոխ, սխտոր, բազուկ, պղպեղ, կաղամբ, ծաղկակաղամբ, դդում, սմբուկ, գազար: Անհրաժեշտ է անվանել դրանցից յուրաքանչյուրը և ցույց տալ համապատասխան ժեստերը: Մանկավարժը երեխաների առջև դնում է բանջարեղենի անվանումով բառաքարտեր: Երեխաներից յուրաքանչյուրը պետք է վերցնի մեկ նկար, գտնի համապատասխան բառաքարտը և այն տեղադրի նկարի մոտ: Խաղի վերջում երեխաները պետք է նշեն ընդհանրացնող անվանումը՝ «Բանջարեղեն»:

Նմանատիպ խաղեր անհրաժեշտ է կիրառել այլ թեմատիկ նկարների օգնությամբ՝ մրգեր, կենդանիներ, բույսեր, մարմնի մասեր և այլն:

2. Միջատներ

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ:

Խաղի ընթացքը: Երեխաների առջև դրվում են միջատների, կենդանիների և թռչունների նկարներ: Սուրդոմանկավարժն առաջարկում է գտնել միջատների նկարներ: Երեխաները պետք է գտնեն ճիշտ նկարները, ցույց տան համապատասխան ժեստերը, անվանեն

դրանցից յուրաքանչյուրը: Այնուհետև նրանք պետք է *մեղու, թիթեռ, գատիկ* բառերով կազմեն բառակապակցություններ (ժեստերով և բառերով):

3. Խաղ գնդակով. «Ի՛նչ է սա»

Անհրաժեշտ պարագաներ՝ գնդակ, խաղալիքներ, նկարներ:

Խաղի ընթացքը: Սուրդոմանկավարժը գնդակը նետում է երեխային, այնուհետև ցույց է տալիս որևէ խաղալիք կամ նկար / օրինակ՝ խնձոր/: Երեխան պետք է բռնի գնդակը, անվանի բառը և ետ գցի գնդակը ուսուցչին, ապա ցույց տա համապատասխան ժեստը:

Տվյալ խաղը կարելի է անցկացնել նաև այլ տարբերակով: Ուսուցիչը գնդակը գցելուց հետո ցույց է տալիս որևէ ժեստ. երեխան պետք է անվանի բառը:

4. Խաղ գնդակով. «Ո՞վ է, ի՛նչ է»

Անհրաժեշտ պարագաներ՝ գնդակ, նկարներ, բառաքարտեր՝ *ո՛վ, ի՛նչ և ինչպիսի՛ն* հարցերով:

Խաղի ընթացքը: Ուսուցիչը գնդակը նետում է երեխային և ցույց տալիս նկար, այնուհետև բառաքարտ՝*ո՛վ* կամ *ի՛նչ* հարցով: Աշակերտը, բռնելով գնդակը, պետք է անվանի պատկերված առարկան և պատասխանի *ո՛վ /ի՛նչ* հարցին: Օրինակ՝ ի՛նչ – սեղան, ո՛վ – աղջիկ: Այնուհետև սուրդոմանկավարժն առաջադրում է հաջորդ հարցը՝ *ինչպիսի՛ն*: Օրինակ՝ ի՛նչ – ծառ, ինչպիսի՛ն ծառ – կանաչ, բարձր և այլն: Ո՞վ – աղջիկ, ինչպիսի՛ն աղջիկ – գեղեցիկ, խելացի և այլն: Խաղում հաղթում է այն երեխան, ով բոլոր հարցերին ճիշտ է պատասխանում: Հաղթող երեխան դառնում է խաղավար:

5. Միրգ – բանջարեղեն

Անհրաժեշտ պարագա՝ գնդակ:

Խաղի ընթացքը: Խաղից առաջ անհրաժեշտ է կրկնել մրգերի և բանջարեղենի անունները: Ուսուցիչը գնդակը նետում է աշակերտին և ասում՝ բանջարեղեն: Աշակերտը պետք է բռնի գնդակը և արագ ասի որևէ բանջարեղենի անուն. օրինակ՝ գազար: Այնուհետև գնդակը գլորում

Ե կողքի երեխային, ով պետք է ցույց տա բառին համապատասխան ժեստը և ետ գլորի գնդակը ուսուցչին:

Խաղը կիրառելի է զանազան թեմաների (կենդանիներ, գույներ, հագուստ և այլն) յուրացումն ամրակայելու նպատակով:

6. Անվանիր մասերը

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ:

Խաղի ընթացքը

Տարբերակ 1. Նկարի հիման վրա

Ուսուցիչը ցույց է տալիս նկար, երեխաները պետք է անվանեն այն և ցույց տան համապատասխան ժեստը: Այնուհետև մանկավարժն առաջարկում է նշել և անվանել մասերը, օրինակ՝

Կատու - գլուխ, պոչ, թաթեր, ...

Տուն - տանիք, լուսամուտ, դուռ, ...

Ծառ - արմատ, բուն, տերևներ, ...

Մարդ - գլուխ, իրան, ձեռք, ոտք, ...

Մեքենա - անիվ, դեկ, ...

Տարբերակ 2. Ժեստերի ցուցադրման միջոցով

Երեխաները պետք է ընկալեն ուսուցչի կողմից ցուցադրված ժեստերը, դրանք անվանեն բառերով և գտնեն համապատասխան նկարը:

7. Խաղ գնդակով. «Ինչպիսի՞ առարկա է»

Անհրաժեշտ պարագաներ՝ գնդակ, նկարներ:

Խաղի ընթացքը

Տարբերակ 1: Երեխաները կիսաշրջանով նստում են սեղանի շուրջ՝ ուսուցչի դիմաց: Նա գլորում է գնդակը աշակերտներից մեկին, ցույց է տալիս որևէ առարկա կամ նկար, ապա հարցնում. «Ինչպիսի՞ առարկա է»:

Գնդակը վերցնող երեխան պետք է անվանի առարկան և ասի բնութագրող որևէ ածական (օրինակ՝ *սեղան - մեծ, կլոր* և այլն): (Խաղն

անհրաժեշտ է կիրառել երկու տարբերակով, մի դեպքում՝ բառերի, մեկ այլ դեպքում՝ ժեստերի օգնությամբ):

Տարբերակ 2. Ուսուցիչը գնդակը գլորում է երեխային և միաժամանակ հարցնում. «*Ինչպիսի՞նք ծաղիկ է, ինչպիսի՞նք սրբիչ է* և այլն: Աշակերտը վերադարձնում է գնդակը՝ պատասխանելով, օրինակ՝ *մաքուր սրբիչ է, գեղեցիկ ծաղիկ է, կլոր գնդակ է* և այլն:

8. Կահույք

Անհրաժեշտ պարագաներ՝ առարկաների նկարներ, բառաքարտ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչը ցուցադրում է առարկայական նկարներ (աթոռ, մահճակալ, բազկաթոռ, բազմոց, պահարան, սեղան): Աշակերտները պետք է անվանեն առարկաները և ցույց տան համապատասխան ժեստը: Այնուհետև երեխաները պետք է բնութագրեն առարկան: Օրինակ՝ *սեղան - բարձր, փայտե, կլոր* և այլն:

Խաղի վերջում նրանք ասում են «կահույք» ընդհանրական անվանումը:

Առաջադրանքն անհրաժեշտ է կատարել՝

1-ին տարբերակ՝ ժեստերով,

2 -րդ տարբերակ՝ բառային խոսքով:

Վերջում երեխաներին առաջարկվում է ընտրել երեք բառ և կազմել բառակապակցություններ: Այդ բառակապակցություններից մեկը պետք է գործածել նախադասությունների մեջ:

9. Ինչպիսի՞ն է կենդանին

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ, բառաքարտեր:

Խաղի ընթացքը: Երեխաներին տրվում են նկարներ, որոնց վրա պատկերված են կենդանիներ: Հարկավոր է անվանել դրանք, այնուհետև մտածել կենդանիներին բնութագրող ածականներ: Երեխաները կարող են օգտվել բառաքարտերից, որոնց վրա գրված են բնութագրող բառեր (հսկա, խորամանկ, գորշ, զվարճալի, դանդաղաշարժ): Այնուհետև նրանք պետք է ցույց տան համապատասխան ժեստերը և դրանց համապատասխանող հատկանիշները:

Երեխաներին առաջարկվում է գրել բառակապակցություններ:

Օրինակ՝ վահկոտ նապաստակ,

- ... փիղ,
- ... աղվես,
- ... գայլ,
- ... կապիկ,
- ... կրիա և այլն:

10. Ով ինչպես է տեղաշարժվում

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչը երեխաներին տրամադրում է կենդանիներ և մարդիկ պատկերող նկարներ: Նրանք պետք է անվանեն պատկերները և ցուցադրեն ժեստերով, թե ինչպես է տեղաշարժվում նրանցից յուրաքանչյուրը: Այնուհետև համապատասխան գործողությունը պետք է անվանեն բառերով:

- Օրինակ՝ ձին վազում է,
- օձը սողում է,
- ձուկը լողում է,
- գորտը ցատկոտում է,
- արծիվը թռչում է և այլն:

11. Ո՞վ է, ի՞նչ է անում

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչն աշակերտներին տրամադրում է նկարներ, որոնց վրա պատկերված են տարբեր մասնագիտության տեր մարդիկ: Երեխաները պետք է ժեստերով ցուցադրեն մասնագիտությունները, այնուհետև բառային խոսքով ասեն, թե ով ինչ է անում: Օրինակ՝

- Ուսուցիչը սովորեցնում է:
- Բժիշկը բուժում է:

Խոհարարը եփում է:

Վարսավիրը սանրում է, կտրում է մազերը և այլն:

Շինարարը կառուցում է և այլն:

Այս առաջադրանքը կարելի է իրականացնել նաև այլ տարբերակով:

Երեխաներին առաջադրվում են հարցեր, որոնց պետք է պատասխանեն 2 տարբերակով՝

1. բառային խոսքով,
2. ժեստերով:

Հարցերի օրինակներ

Ո՞վ է տուն կառուցում:

Ո՞վ է աշխատում դպրոցում:

Ի՞նչ է անում խոհարարը:

Ո՞վ է վարում ավտոբուսը:

Ո՞վ է բուժում հիվանդներին:

Ի՞նչ է անում նկարիչը:

Ի՞նչ մասնագիտություն ունի թո մայրիկը:

Ի՞նչ է աշխատում թո հայրիկը:

12. Կերակրի՛ր կենդանիներին

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ, խաղալիքներ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչը երեխաներին առաջարկում է կերակրել կենդանիներին: Օգտագործելով համապատասխան խաղալիքներ և պատկերավոր նկարներ՝ երեխաները յուրաքանչյուր կենդանու կերակրում են համապատասխան ուտելիքով: Երեխաները պետք է ժեստերով, ապա բառային խոսքով ասեն, թե ով ինչ է ուտում: Օրինակ՝

Կովը ուտում է խոտ, կանաչի:

Հավը ցորեն է կտցում:

Կատուն ձուկ է ուտում:

Շունը ոսկոր է կրծում:

Վագրը ուտում է միս:

Սկյուռնը կրծում է ընկույզ:

13. Որտեղ են ապրում կենդանիները

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ, խաղալիքներ:

Խաղի ընթացքը: Աշակերտներին տրվում են նկարներ, որոնք պատկերում են վայրի և ընտանի կենդանիներ, բներ, անտառ (ջուղալիներ): Երեխաներից պահանջվում է անվանել կենդանիներին, խմբավորել նրանց ըստ տեսակների՝ վայրի և ընտանի, և ցուցադրել համապատասխան ժեստեր: Մանկավարժը յուրաքանչյուր երեխայի տալիս է որևէ խաղալիք-կենդանի և հարց ուղղում. «Որտեղ է ապրում»: Երեխաներից պահանջվում է անվանել կենդանուն, տեղադրել նրան համապատասխան վայրում և անվանել այդ վայրը:

Օրինակ՝ Արջը ապրում է *որջում*:

Կապիկը ապրում է *ջուղալիներում*:

14. Գրի՛ր անունները

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ, թղթեր:

Խաղի ընթացքը: Ուսուցիչը երեխաներին տրամադրում է նկարներ, որոնց վրա պատկերված են տարբեր կենդանիներ, ինչպես նաև թղթեր, որոնց վրա նախապես գծված են վանդակներ, և գրված է կենդանիների անվանը համապատասխան սկզբնատառը: *Մողես, կապիկ, վագր, այծ, շուն, գետնածի, կատու, ջայլամ և այլն*:

Երեխաները պետք է կարողանան ճիշտ գրել անունները և կենդանիներին դասակարգել ըստ տեսակների՝ ընտանի և վայրի: Ապա յուրաքանչյուր երեխայի առաջարկվում է ընտրել մեկ բառ և կազմել նախադասություն:

15. Վերտոլինա

Անհրաժեշտ պարագաներ՝ ստվարաթուղթ, բառաքարտեր:

Խաղի ընթացքը

Տարբերակ 1. Ուսուցիչը մեծ ստվարաթղթով պատրաստում է շրջանակ, որի կենտրոնում դրվում է սլաք (վերտոլինա): Սլաքի վրա ամրացվում է քարտ, որի վրա գրված է «Ինչպիսի՞նք» հարցը: Շրջանակի վրա ամրացվում են բառաքարտեր՝ *տուն, երկինք, խոտ, բաժակ, ծաղիկ, շուն, նապաստակ* բառերով: Երեխաները պատում են սլաքը. երբ այն

կանգ է առնում որևէ բառաբարտի վրա, երեխան պետք է կարդա այդ բառը, ցույց տա համապատասխան ժեստը և բնութագրի, թե ինչպիսին է այդ առարկան կամ կենդանին:

Տարբերակ 2. Սլաքի վրա գրված է *ինչ* հարցը, իսկ շրջանակի վրա ամրացված բառաբարտերի վրա գրված են *բարձր, գեղեցիկ, երկինքանգ, կապույտ, մաքուր, վախկոտ* բառերը: Երեխաները պտտում են սլաքը: Երբ այն կանգ է առնում որևէ բառաբարտի վրա, երեխան պետք է կարդա այդ բառը, ցույց տա համապատասխան ժեստը, որից հետո ասի ածականին համապատասխանող գոյական: Օրինակ՝ *գեղեցիկ (ինչ) նկար, կապույտ (ինչ) երկինք և այլն:*

16. Ինչ են անում երեխաները

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ:

Խաղի ընթացքը: Դիտել նկարները, ժեստերով արտահայտել երեխաների կատարած գործողությունները: Յուրաքանչյուր նկարի տակ գրել, թե ինչ են անում երեխաները:

Սովորել, նվագել, հավաքել, խաղալ, ուտել բայերով կազմել նախադասություններ:

17. Կազմի՛ր բառակապակցություն

Անհրաժեշտ պարագաներ՝ նկարներ:

Խաղի ընթացքը: Դիտել նկարները, արտահայտել համապատասխան ժեստերով: Գտնել նկարին համապատասխան բառը և կազմել բառակապակցություն:

Առաջարկվող բառեր՝ մեծ, գեղեցիկ, ապակյա, խելացի, չարածճի, կլոր:

18. Գտի՛ր ձագուկին

Անհրաժեշտ պարագաներ՝ բառաբարտեր, նկարներ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչն աշակերտներին ցուցադրում է նկարներ, որոնց վրա պատկերված են կենդանիներ և դրանց ձագերը: Երեխան պետք է ճիշտ համադրի նկարները: Այնուհետև բաժանում է բառաբարտեր, որոնց վրա գրված են բառեր (կենդանիների և ձագերի

անունները): Աշակերտները պետք է նախ՝ սլաքներով իրար միացնեն բառերը, ապա՝ ցույց տան յուրաքանչյուր բառի համապատասխան ժեստը: Այնուհետև պետք է ընտրեն բառերի 2 զույգ և դրանցով կազմեն նախադասություններ:

19. Գործիքներ

Անհրաժեշտ պարագաներ՝ բառաքարտեր, նկարներ:

Խաղի ընթացքը: Ուսուցիչը երեխաներին տալիս է գործիքների նկարներ և բառաքարտեր: Բառաքարտերից մեկի վրա գրված է գործիքի անվանումը, մյուսին՝ դրանցով կատարվող գործողությունը: Երեխաները պետք է որոշեն, թե սովյալ գործիքով ինչ գործողություն են կատարում:

ա) Սլաքներով ճիշտ միացնել բառերը.

մուրճ	խարտել
-------	--------

բահ	մեխել
-----	-------

կացին	հավաքել
-------	---------

գերանդի	հատել
---------	-------

փոցխ	հնձել
------	-------

խարտոց	փորել
--------	-------

Առաջադրանքը պետք է կատարել նաև ժեստերի լեզվով:

բ) Ստացված բառերից ընտրել երկու զույգ և կազմել նախադասություններ:

Բառակապակցություններն արտահայտել ժեստերով:

Նախադասություններն արտահայտել ժեստերով:

20. Ծիածան (հոմանիշներ և հականիշներ)

Խաղի ընթացքը: Երեխաներին տրվում է ծիածանի 2 պատկեր: Առաջին ծիածանի շերտերի վրա բառեր են գրված, իսկ մյուս ծիածանը դատարկ է: Ուսուցիչը երեխաներին առաջարկում է մտածել տրված բառերի հականիշները և գրել երկրորդ ծիածանի համապատասխան գույնի շերտերի վրա:

ուրախ

ծեր

լավ
ուժեղ
գեղեցիկ
բարձր
ծույլ

Ցույց տալ ժեստերով հականիշ բառերը:

21. Ճիշտ ընտրիր և դասավորիր հականիշ բառերը

Վախկոտ, նորոգել, ցածր, իջնել, կեղտոտել, թթու, հարուստ, դժբախտ:

երջանիկ -	բարձրանալ -
համարձակ -	աղբատ -
բարձր -	քաղցր -
ջարդել -	մաքրել -

ա) Տրվում է 12 բառից կազմված բառաշարք, որտեղ բառերը գրված են տարբեր գույներով (կապույտ, դեղին, կանաչ, կարմիր, թանաքագույն): Երեխաները պետք է համապատասխան գույներով գտնեն բառերի գույգերը: Տրված են հետևյալ բառերը. *խիստ, հզոր, խորամանկ, առողջ, խոշոր, գեր, թույլ, ազնիվ, տկար, նիհար, մանր, մեղմ:* Երեխաները պետք է բառաշարքից առանձնացնեն և դեմ դիմաց գրեն նույն գույնն ունեցող հականիշ բառերը:

բ) Բառաշարքից առանձնացրև և դեմ դիմաց գրիր նույն գույնն ունեցող հոմանիշ բառերը. *կանաչ, դեղին, ճերմակ, զմրուխտ, կարմիր, սպիտակ, ոսկեգույն, ալ:*

22. Ասա՛ հակառակը

Խաղի ընթացքը: Ցույց տալ բառերին համապատասխան ժեստերը: Գրել բառերի հականիշները:

գեղեցիկ...	խոսել ...
բարակ...	վերցնել...
գիշեր..	հազնվել...
լույս...	մեծ...
բացել...	երիտասարդ...
առողջ...	բարձր...

Այս բառերից ընտրել ցանկացած 5 բառ և կազմել բառակապակցություններ:

23. Համանուն բառեր

Խաղի ընթացքը: Ուսուցիչն առաջարկում է տարբեր նշանակություն ունեցող (համանուն) բառեր: Օրինակ՝ մարտ – պատերազմ, ամիս, ամի - եզր, ծովափ, ձեռքի ամի,

հոտ - բույր, ոչխարների խումբ և այլն:

Թարգմանել այս բառերը ժեստերով, համեմատության համար ցույց տալ այն ժեստերը, որոնք նույնպես բազմիմաստ են: Օրինակ՝ կանաչ - երիտասարդ, սուրճ - շագանակագույն և այլն: Տրված բառերով կազմել նախադասություններ:

Ցուցադրել միևնույն ձևն ունեցող, բայց տարբեր իմաստներ արտահայտող ժեստեր: Կազմել նախադասություններ ժեստերի լեզվով:

24. Կռահիր, նկարիր և գրիր

Խաղի ընթացքը: Ուսուցիչը վերցնում է պարկ, որտեղ դրված են տարբեր խաղալիքներ և առարկաներ, օրինակ՝ խնձոր, գնդակ, վարունգ, նապաստակ, մեքենա և այլն:

Երեխաներին տրվում են թուղթ և մատիտներ: Ուսուցիչը մոտենում է յուրաքանչյուր երեխայի, դնում տուփը նրա առջև և սկսում նկարագրել այնտեղ եղած որևէ առարկա (մի դեպքում՝ բառերով, մյուս դեպքում՝ ժեստերով):

Օրինակ՝ կլոր է, աճում է ծառի վրա: Զաղցր է, լինում է դեղին, կանաչ, կարմրադեղին (խնձոր):

Երեխան պետք է կռահի, թե դա ինչ է, գտնի այն պարկում և նկարի: Այնուհետև երեխան պետք է գրի այդ առարկայի անունը:

25. Պատասխանիր հարցերին

Խաղի ընթացքը: Մանկավարժը տալիս է *ինչ, ինչպիսիք, որքան, ինչ անել* հարցերով քարտեր: Աշակերտներից պահանջվում է գրել այդ հարցերին համապատասխանող բառեր:

Օրինակ՝

Ուսուցիչ	Աշակերտ
Ո՞վ	տատիկ
ի՞նչ	մատիտ
ինչպիսի՞նք	մեծ
որքա՞ն	հինգ
ի՞նչ անել	գրել

Նման առաջադրանքը պետք է կատարել նաև ժեստերի միջոցով: Կարելի է կիրառել նաև այլ տարբերակ. հարցը տրվում է ժեստերով, պատասխանը պետք է տրվի բառերով (և հակառակը):

Հակադիր բառեր

Ուսուցիչ	Աշակերտ
<i>հաստ</i>	<i>բարակ</i>
<i>մեծ</i>	<i>փոքր</i>
<i>կարծ</i>	<i>երկար</i>
<i>լավ</i>	<i>վատ</i>
<i>գեղեցիկ</i>	<i>տղեղ</i>

Տրված առաջադրանքները կարելի է կիրառել երկու տարբերակով՝ մի դեպքում ժեստերի միջոցով, երկրորդ դեպքում՝ բառային խոսքով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1

Տրված է բառերի 2 շարք: Երեխաները պետք է գտնեն և սլաքներով իրար միացնեն հոմանիշ բառերը, ապա ցույց տան համապատասխան ժեստերը: Այնուհետև ընտրեն բառեր և կազմեն նախադասություններ.

պսպղալ	իմանալ
հովանալ	ազատել
փրկել	փայլփլել
գնալ	զովանալ
գիտենալ	մեկնել

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2

Կարդալ բառերը, ցույց տալ համապատասխան ժեստերը: Կազմել բառակապակցություններ՝ տրված բառերով.

երգ, միրգ, բերք, շարք, ուրախ, առատ, համեղ, երկրորդ:

Ընտրել երկու բառակապակցություն և դրանցով կազմել նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3

Տարբերակ 1. Տրվում են առարկաների նկարներ (խնձոր, լիճ, պայուսակ, փիղ, մեքենա և այլն) և բառաքարտեր (ածականներ): Երեխաները պետք է ընտրեն նկարներին համապատասխանող ճիշտ բառերը: Օրինակ՝ նայել նկարին (խնձոր) և նշել խնձորի հատկանիշները՝ կարմիր, քաղցր, համեղ:

Տարբերակ 2. Տրվում են բառեր (ածականներ՝ *լուսավոր, գեղեցիկ, մռայլ, բարձր, աշնանային, խելացի*): Երեխաները պետք է մտածեն յուրաքանչյուր ածականին համապատասխան գոյական և կազմեն բառակապակցություններ:

Վարժությունը կատարել բառային խոսքով և ժեստերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4

Լրացրու՝ նախադասությունը:

Տղան խաղում է...

Տատիկը պատրաստում է...

Շինարարը կառուցում է...

Աղջիկը սովորում է...

Ընտրել համապատասխան բառերը (գնդակ, կարկանդակ, տուն, դաս) և լրացնել նախադասությունները: Նախադասություններն արտահայտել ժեստերի լեզվով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5

Լրացրո՛ւ նախադասությունը հարցերի օգնությամբ:

Լրացնել նախադասությունները՝ օգտվելով տրված բառերից. պապիկ, արագիլ, կապիկ, նավակ:

Վանդակում թռչկոտում է գվարճալի (ֆնջ):

Տան կտուրին բույն է դրել (ի՛նչը):

Արամը (ի՛վ) նավաստի է:

Կապույտ լճակում լողում է (ի՛նչ):

Արտահայտել ստացված նախադասությունները ժեստերի լեզվով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6

Կազմի՛ր նախադասություններ տրված բառակապակցություններով.

ճերմակ ձյուն

համեղ միրգ

կանաչ բացատ

խելացի աշակերտ

Բառակապակցությունները թարգմանել ժեստերով և կազմել նախադասություններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7

Ծի՞շտ դասավորիր բառերը նախադասության մեջ:

Աշխատասեր, օգնում, է, աղջիկը, միշտ, մայրիկին:

Փորձառու, Վահանի, է, նավավար, պապիկը:

Անին, նկարել, շատ, սիրում, բնություն, է:

Թարգմանել կազմված նախադասությունները ժեստերի լեզվով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8

Կազմի՛ր նախադասություններ՝ գործածելով տրված բառերը:

Երեխաներին տրվում են բառաքարտեր, որտեղ գրված են *գարուն, զարթոնք, կանաչ, վերադարձ, բողբոջ, թռչուն, գեղեցիկ, երկինք, ծառ* բառերը: Յուրաքանչյուր բառի իմաստային բացատրությունը պետք է տրվի ժեստերով:

Տրված բառերով կազմել նախադասություններ: Ապա այդ նախադասությունները կապակցել այնպես, որ ստացվի իմաստավորված պատմություն: Այնուհետև այն պետք է թարգմանել ժեստերի լեզվով:

ԲԱԺԻՆ 3

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Կռահի՛ր հանելուկները

Հանելուկները՝ ըստ Սողոմոն Մկրտչյանի

Սուրդոմանկավարժը երեխաներին առաջադրում է կարդալ հանելուկները, ապա թարգմանում է դրանք ժեստերի լեզվով. բացատրվում են նոր բառերի իմաստները: Երեխաներին բաժանում է թռչունների, կենդանիների կամ այլ առարկաների պատկերներով նկարներ: Երեխաները պետք է կարդան հանելուկները, ընտրեն համապատասխան նկարները և գրեն ճիշտ պատասխանը:

Ի՞նչ թռչուն է չի թռչում,
Խոշոր ձկեր է ածում.
Տեսքով նման է ուղտի,
Հայտնի չեմպիոն է վազքի: **(Զայլամ)**

Ի՞նչ է՝ գրահն ահագին
Անվերջ պահում է իր հագին: **(Կրիա)**

Գիտեմ փոքրիկ մի արև,
Ամեն շողը՝ մի տերև: **(Արևածաղիկ)**

Կա մի փոքրիկ կենդանի,
Ե՛վ վայրի, և՛ ընտանի,
Երկու անուն իսկական,
Մեկ մականունն նա ունի: **(Նապաստակ)**

Կռահի՛ր՝ ինչէ՞ր են

Սիրում է կանգնել մի ոտքի վրա,
Կարո՞ղ եք ասել անունը նրա,
Չի ծլվլում, չխկչխկացնում է ,
Երբ որ կարմիր կտուցը բացում է: **(Արագիլ)**

Կարծես լինի մի պարան,
Չփորձես մոտենալ նրան,
Մեկ էլ տեսար՝ թունավոր է,
Պարանն այդ վտանգավոր է: **(Օձ)**

Փետուրներով գույնզգույն,
Կեռ կտուցով մի թռչուն,
Թռվում է անդադար.
Ասում խոսքեր անհամար: **(Թռչակ)**

Սիրելին եմ ամեն տան,
Մանուկներին բարեկամ,
Մուշտակս՝ տաք ու թևբուշ,
Ես՝ մկների աչքի փուշ: **(Կատու)**

Երբ դնում ենք, կտրատում,
Մանրիկ-մանրիկ մասնատում,
Լացացնում է ինձ ու քեզ,
Անո լնն ասա, թե գիտես: **(Սոխ)**

ԲԱԺԻՆ 4

**ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆԸ
ՄԻՏՎԱԾ ՏԵՔՍՏԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Անձրև

Երեխաներին առաջարկվում է մեկ սյուժեով կապակցված նկարների շարք (Ուժեղ, հորդառատ անձրև է գալիս: Երեխաները վազում են դեպի տուն: Քամին ջարդում է ծառի ճյուղերը և այլն): Երեխաները պետք է հաջորդաբար դասավորեն նկարները և պատմվածք հորինեն:

Որպես օգնություն՝ սուրդոմանկավարժը կարող է հուշող հարցեր տալ. Ինչ է պատկերված նկարում, Ինչպիսի եղանակ է, Ինչո՞ւ են երեխաները վազում և այլն: Եթե երեխաները դժվարանում են, ապա սկզբից պատմում են ժեստերի լեզվով: Այնուհետև նկարները կրկին վերլուծելուց հետո պետք է պատմվածքը վերարտադրել բառային խոսքով:

Կրկեսում

Երեխաներին առաջարկվում է կրկեսի ներկայացում պատկերող նկարների շարք: Պետք է ճիշտ հաջորդականությամբ դասավորել նկարները: Այնուհետև նրանք պետք է ժեստերի լեզվով պատմեն նկարի բովանդակությունը: Օգնության համար կարելի է անել հետևյալ հարցադրումները.

Ո՞վ է պատկերված նկարում:

Ի՞նչ են անում մարդիկ:

Ի՞նչ կենդանիներ ես տեսնում այստեղ:

Ի՞նչ են անում կենդանիները և այլն:

Երեխաները պետք է հարցերին պատասխանեն բառային խոսքով: Այնուհետև ուսուցիչն առաջարկում է հիշել՝ ով է եղել կրկեսում, և պատմել՝ ինչ կենդանիներ են տեսել այստեղ, ինչ ներկայացումներ են դիտել կրկեսում և այլն:

Մանկապարտեզում

Մանկավարժը երեխաներին առաջարկում է դիտել սյուժետային նկար (մանկապարտեզում, խմբակային սենյակում դաստիարակը գիրք է կարդում, երեխաները նստած են նրա շուրջը և ուշադիր լսում են նրան):

Մանկավարժն առաջարկում է նայել նկարին և պատմություն հորինել: Եթե երեխան դժվարանում է, կարելի է հուշող հարցեր տալ՝

Ի՞նչ սենյակ է սա:

Ովքե՞ր են այնտեղ գտնվում:

Ի՞նչ են անում երեխաները:

Ո՞վ է կարդում գիրքը և այլն:

Կարելի է կիրառել նաև ժեստային հարցադրումներ՝ակտիվացնելով երեխայի կենսական փորձը.

Ի՞նչ հեքիաթ ես դու սիրում:

Ո՞վ է քո սիրած հեքիաթի գլխավոր հերոսը:

Ժեստերով պատմի՞ր սիրածդ հեքիաթը:

Բժշկի մոտ

Թեմատիկ նկար. բժիշկը նստած է աթոռին, իսկ նրա կողքին կանգնած է մի երեխա: Սենյակում կա պահարան, որտեղ դրված են դեղորայք և բժշկական գործիքներ: Պատին ամրացված է տեսողությունը ստուգելու համար նախատեսված աղյուսակ:

Երեխաները պետք է դիտեն նկարը և հորինեն պատմվածք: Եթե դժվարանում են, առաջարկվում է պատմել ժեստերով, կարելի է տալ օգնող հարցեր.

Ո՞վ է նստած աթոռին:

Ի՞նչո՞ւ է երեխան եկել բժշկի մոտ:

Իսկ դու եղե՞լ ես բժշկի մոտ: Ի՞նչ էր հարցնում քեզ բժիշկը:

Այդ զրույցից հետո երեխաները պետք է բառային խոսքով պատմեն նկարի բովանդակությունը:

Տղայի առավոտը

Տրված են թեմատիկ նկարներ, որոնք պատկերում են երեխայի արթնանալը և մահճակալի վրա նստելը, լվացվելը, հագնվելը, նախաճաշելը և այլն:

Երեխաները պետք է դիտեն և ճիշտ դասավորեն նկարները: Այնուհետև պետք է պատմեն յուրաքանչյուր նկարի բովանդակությունը: Եթե դժվարանում են, ուսուցիչն առաջարկում է պատմել ժեստերով,

այնուհետև հուշող հարցերի օգնությամբ բառային խոսքով պատասխանել հարցադրումներին.

Ե՞րբ ես դու արթնանում: Իսկ հիմա ցո՛ւյց տուր նկարի վրա: Ծի՛ջտ է, տղան արթնացել և նստել է մահճակալին, իսկ հետո ի՛նչ պետք է անի. ցո՛ւյց տուր նկարի վրա: Իսկ լվացվելուց հետո դու ի՛նչ ես անում: Գտի՛ր համապատասխան նկարը: Հագնվելուց հետո ի՛նչ ես անում, գտի՛ր այն նկարի վրա:

Պարապմունքի վերջում երեխային առաջարկվում է պատմել նկարի բովանդակությունն ամբողջությամբ՝ ա) ժեստերով. բ) բառային խոսքով:

Պատմի՛ր հեքիաթը

Երեխաները տեսաերիզով ժեստերի լեզվով հեքիաթներ են դիտում: Այնուհետև առաջարկվում է պատասխանել ուսուցչի տրված հարցերին, ապա հեքիաթը վերարտադրել ժեստերով: Ուսուցչի հարցերի օգնությամբ նրանք հեքիաթը պետք է պատմեն սաև բառային խոսքով:

Ավարտի՛ր պատմությունը և վերնագրի ր այն

Փոքրիկ աղջիկը մտավ խոհանոց, տատիկը նրան իր թխած բլիթներից սովեց: Դրանք դեռ տաք էին և այնքան լավ էին բուրում: Աղջիկը վերցրեց բլիթները: Երբ կերավ կշտացավ, դեմքը ծամածռելով ասաց, որ բլիթներն իրեն բուլդոզիս դուր չեկան: Տատիկը լռեց, նրա աչքերի մեջ արցունքներ երևացին: Նա ամբողջ օրը տխուր էր: Ընտանիքի անդամներն անհանգստացան: Միակ մարդը, որը գիտեր տատիկի տխրության պատճառը, թռռնիկն էր: Նա հասկացավ իր սխալը: (ըստ Ն. Հեքեյանի)

Ծիրանենի

Բաց թողնված տեղերում եզակի կամ հոգնակի թվով լրացնել *ծիրանենի, ծաղիկ, պտուղ, տերև, միրգ* բառերը:

Թարգմանել բնագիրը՝ ժեստերի լեզվով:

Ընդգծված բառերով կազմել բառակապակցություններ, ապա նախադասություններ: Վերնագրել բնագիրը:

- *Ծիրանենին ամբողջ աշխարհում հայտնի է որպես հայկական պտուղ: Դրա հայրենիքը Հայաստանն է: Դեռ հին հույները ... անվանում էին հայկական խնձոր:*
- *... ծառը շատ գեղեցիկ է զարնանը, երբ այն ծաղկում է: ... ունի նուրբ, սպիտակ թերթիկներով ...: Ծիրանենու ... լինում են ոսկեգույն, դեղին և կարմրադեղին: Ծիրանը շատ համեղ և չափազանց օգտակար ... է:*
- *Ծիրանից պատրաստում են մուրաբա, հյութ, չիր և ջեմ: Ծիրանի յուղն օգտագործվում է բժշկության մեջ:*
- *... փայտից պատրաստում են դուղուկ:*

Սուրդումանկավարժը երեխաներին առաջարկում է կարդալ բնագիրը, դուրս գրել անծանոթ բառերը, որոնց իմաստային բացատրությունները պետք է տրվեն ժեստերի լեզվով: Այնուհետև հանձնարարվում է թարգմանել բնագիրը ժեստերի լեզվով:

Ընդգծված բառերով կազմել բառակապակցություններ, ապա՝ նախադասություններ: Կրկին ընթերցել տեքստը և վերնագրել:

Իմաստուններից մեկը հարցրեց իրար մոտ հպարտ կանգնած ծառերին:

- Ինչն է պատճառը, որ որքան բարձրանում եք, այնքան խոր արմատներ եք գցում:

Ծառերը պատասխանեցին.

- Մենք չենք կարող այդքան ճուղեր կրել մեզ վրա: Եթե խոր արմատներ չգցենք, չենք դիմանա հողմերին: Տեսնում ես, մեր եղբայր այն ծառերը, որոնք խոր ու ուժեղ արմատներ չունեն, չեն կարողանում դիմադրել քամիներին: (ըստ Լ. դա Վինչիի)

Կախարդական մեղեդի

Կարդալ բնագիրը, լրացնել բաց թողնված բառերը: Թարգմանել ժեստերի լեզվով: Վերարտադրել բնագրի բովանդակությունը նախ՝ բառային խոսքով, ապա՝ ժեստերի լեզվով:

Բնագրում բաց են թողնված հետևյալ բառերը՝ *մարդ, սրինգ, հիվանդներ, նվագ, գետին, թաթեր, ոռնոց, քաղաք:*

- *Վաղուց, շատ վաղուց մի ... ապրում: Նա աշխարհի ամենաբարի*

մարդն էր: Հենց որ լույսը բացվում էր, վերցնում էր իր սրինգն ու շրջում էր գյուղից գյուղ, քաղաքից ...: Նա իր ... քաղցր մեղեդիներով մխիթարում էր վշտացածներին, բժշկում ...: Երբ լսվում էր նրա ..., թշնամիները հաշտվում էին, խոսում սիրո և եղբայրության մասին:

Մի անգամ ուշ գիշերով ... տուն էր վերադառնում անտառի միջով: Հանկարծ շատ մոտիկ լսվեց գայլերի ..., իսկ քիչ հետո խավարի մեջ պսպղացին նրանց աչքերը: ... մի պահ քարացավ, բայց իսկույն սթափվեց, ձեռքն առավ ... ու սկսեց նվագել: Հնչեց կախարդական մեղեդի, և գայլերը նստեցին ..., գլուխները դրեցին առջևի ... վրա ու կարծես քարացան:

Երաժշտությունը գորեղ միջոց է և կարող է հրաշքներ գործել:

Հայրական խրատ

Մի ծերունի երեք որդի ուներ: Որդիները շատ էին վիճում, անհաշտ էին ապրում: Հայրը խորհուրդ էր տալիս որդիներին սիրով և համերաշխ ապրել, սակայն որդիները չէին լսում նրան:

Մի անգամ հայրը հրամայեց պինդ կապած մի խուրձ ճիպոտ բերել: Տվեց զավակներին ու ասաց՝ ջարդեք: Որդիները շատ չարչարվեցին, բայց չկարողացան ջարդել:

Այդ ժամանակ հայրը քանդեց կապերը, ճիպոտները տվեց տղաներին ու կարգադրեց ջարդել: Որդիները հեշտությամբ մեկ-մեկ ջարդեցին ճիպոտները:

Հայրն ասաց որդիներին.

- Այսպես էլ դուք եք: Ձեզ ոչ ոք չի կարող հաղթել, եթե համերաշխ ու միասնական լինեք:

Այս բնագիրը հնարավոր է երեխաներին ներկայացնել ոչ ամբողջությամբ: Սկիզբը կարելի է բաց թողնել՝ երեխաներին առաջարկելով ինքնուրույն մտածել բնագրի սկիզբը: Որպես օգնություն կարելի է կիրառել օգնող հարցեր. «Ինչո՞ւ հայրը հրամայեց ճիպոտ բերել», «Ինչո՞ւ կարգադրեց ջարդել այն», «Ի՞նչ հասկացան որդիները» և այլն:

Ժեստերի լեզվով վերարտադրել բնագրի բովանդակությունը:

Գարուն

Շուտով գարուն է գալու: Ձյունը հալվելու է: Փոքրիկ առվակները դեպի գետն են վազելու: Ձյան տակից դուրս է գալու ձնծաղիկը: Հենց ձյունը հալվի, հողի միջից ծլելու ու վեր են բարձրանալու խոտերն ու ծաղիկները: Թփերի մոտ՝ անտառի արևոտ կողմում, բացվելու են մանուշակները: Մեղուները փեթակներից դուրս են թռչելու՝ ծաղիկների մեջ կեր որոնելու:

Գարնանը գյուղում եռուն աշխատանքներ են սկսվելու: Հովիվները ոչխարների հոտերը սարն են տանելու: Հոտի առջևից գնալու են այծերը: Գառների և ուլերի հոտն էլ նրանց հետևից քշելու են գառնարածները:

Թարգմանել բնագիրը ժեստերի լեզվով: Բնագրից դուրս գրել «ի՛նչ անել» հարցին պատասխանող բառեր: Դրանցից ընտրել երեք բայ և գործածել նախադասության մեջ: (Ըստ Դ. Գյուրջինյանի)

ԲԱԺԻՆ 5

**ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ ԵՎ
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՈՒՇԱՂՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԴՎԱԾ ԽԱՂԵՐ

Տրված խաղերի և վարժությունների կատարման ընթացքում անհրաժեշտ է կիրառել երկու (բառային և ժեստային) լեզուները:

Ինչն է պակասում

Սուրդոմանկավարժը երեխաներին առարկայական նկարներ է տալիս: Երեխաները պետք է դիտեն և հիշեն դրանք, ապա անվանեն նկարները և ցույց տան համապատասխան ժեստերը:

Ուսուցիչը թաքցնում է նկարները՝ դրանց միջից հանելով մի նկար: 2-3 րոպե հետո նկարները կրկին ցուցադրվում են: Երեխաները դիտելուց հետո պետք է որոշեն, թե որ նկարն է պակասում, և գրեն դրա անվանումը:

Գտիր ավելորդը

Ուսուցիչը երեխաներին բաժանում է միևնույն խմբին պատկանող թեմատիկ նկարներ (միրգ, բանջարեղեն, կենդանիներ, երկրաչափական պատկերներ) և բառաբարտեր՝ համապատասխան անվանումներով: Նկարների և բառաբարտերի մեջ կա տվյալ խմբին չպատկանող ավելորդ առարկա: Երեխաները պետք է գտնեն ավելորդ նկարը և բառաբարտը:

Աշակերտներից պահանջվում է գրել նկարների ընդհանրացնող անունը և այն ցույց տալ համապատասխան ժեստով: Այնուհետև երեխաները պետք է գրեն ավելորդ նկարի ընդհանրացնող անվանումը:

Օրինակ՝ ավելորդ նկար՝ վարդ, և բառաբարտ՝ ծաղիկ:

Կենդանաբանական այգի

Երեխաներին տրամադրվում են կենդանաբանական այգու թեմատիկ նկարներ: Նրանք պետք է ասեն, թե ինչ կենդանիներ ու թռչուններ են տեսնում: Այնուհետև պետք է ցույց տան համապատասխան ժեստերը: Մանկավարժը երեխաներին խնդրում է ուշադիր դիտել և հիշել կենդանիներին:

10 րոպե անց նա թաքցնում է նկարները: Երեխաներից պահանջվում է հիշողությամբ գրել նկարում պատկերված կենդանիների անունները:

Առաջադրանքը հնարավորություն է տալիս զարգացնել երեխայի ուշադրությունն ու բառային հիշողությունը:

Ճանաչիր առարկան՝ նկարագրելով

Այս խաղն անցկացվում է երկու տարբերակով:

Տարբերակ 1. Բառային նկարագրություն

Աճում է անտառում՝ ծառի վրա: Ծառն ունի փշեր: Այդ առարկան շագանակագույն է և օվալաձև: Դե ասս, ինչ է դա:

Կենդանին ապրում է անտառում: Ունի երկար, գեղեցիկ պոչ: Մորթին շիկավուն է: Այդ կենդանին խորամանկ է: Դե ասս, ինչ է դա:

Տարբերակ 2. Ժեստերի միջոցով

Ժեստերով ցուցադրել՝ *կլոր, կարմիր, համեղ, ճաշ եփել, սալաթ, օգտագործել* բառերի իմաստները և դիմել երեխաներին. «Դե ասս, ինչ է դա»:

Խմբավորիր և գտիր բառը

Ուսուցչի սեղանին դրված են նկարներ և դրանց համապատասխան ընդհանրացնող անուններով բառաքարտեր: Երեխաներին տրվում են տարբեր խմբերի պատկանող նկարներ: Այդ նկարներն անհրաժեշտ է դասակարգել, օրինակ՝ ըստ տարիքային հատկանիշների՝ երեխաներ, ծերեր, մեծեր, ըստ հուզական վիճակների՝ ուրախ, տխուր, ըստ տարվա եղանակների՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ, ըստ կենդանի և անկենդան բնության առարկաների՝ կենդանիներ, բույսեր, խաղալիքներ և այլն: Խմբավորելուց հետո երեխաները պետք է ցուցադրեն համապատասխան ժեստերը: Այնուհետև յուրաքանչյուր երեխայի տրվում է մեկ խմբին պատկանող նկարներ, երեխաները պետք է գտնեն դրանց համապատասխանող բառաքարտը:

Հիշիր բառերը

Տարբերակ 1. Սուրդոմանկավարժը երեխաներին առաջարկում է բառաքարտեր: Նրանք պետք է նայեն բառաքարտերում գրված բառերին և փորձեն հիշել դրանց անվանումները: Մի քանի րոպե անց բառաքարտը պահվում է, երեխաներին առաջարկվում է գրել բառերը և ցույց տալ դրանց համապատասխան ժեստերը:

Տարբերակ 2. Ուսուցիչը երեխաներին տալիս է իմաստային կապ ունեցող 10 գույգ բառ.

ժամացույց – ժամանակ

մուրճ – մեխ

ջուր – բաժակ

ճաշ – սեղան

անտառ – արջ

մեղու – փեթակ

գետ – կամուրջ

դրամ – կոպեկ

ծով – նավ

գրատախտակ – կավիճ

Երեխաները կարդում են այդ բառերը, 2-3 թույն հետո բառաքարտերը պահվում են: Երեխաներին տալիս են թերթիկներ, որոնց վրա գրված են բառազույգերից միայն առաջինը, նրանք պետք է հիշեն երկրորդ համապատասխան բառը:

Տարբերակ 3. Երեխաները պետք է հիշեն ոչ միայն բառերը, այլև դրանց համապատասխան ժեստերը: 3 թույն անց բառաքարտերը պահվում են, ապա ցուցադրվում է առաջին բառի համապատասխան ժեստը, իսկ երեխաները պետք է գրեն համարժեք բառը և դրան իմաստով մոտ երկրորդ բառը:

Գտիր նմանը

Անհրաժեշտ պարագաներ՝ խաղալիքներ (մեքենա, տնակ, ձուկ, գնդակ, բուրգ):

Երեխաները նստում են սեղանի շուրջ: Յուրաքանչյուրին տրվում է պարկ, որտեղ դրված է մեկ խաղալիք կամ առարկա (մեքենա, տնակ, ձուկ, ոգևի, գնդակ, բուրգ):

Խաղի ընթացքը: Ուսուցիչը բացատրում է երեխաներին, որ պարկում դրված են տարբեր ձևերի առարկաներ ու խաղալիքներ: Պետք է գտնել այդ խաղալիքների ձևին համապատասխանող 5 առարկա, որոնք դրված են ուսուցչի սեղանին կամ սենյակի այլ անկյունում: Երեխաները դիտում են իրենց պարկում դրված առարկաները և մտապահում: Հետո մոտենում են ուսուցչի սեղանին կամ շրջում սենյակում՝ փորձելով գտնել նման առարկաները: Գտնելուց հետո դնում են իրենց սեղանին և փորձում հիմնավորել, թե ինչու են ընտրել այդ առարկան, ինչով են նման այդ առարկաները կամ խաղալիքները:

Դժվարության դեպքում ուսուցիչը երեխաներին օգնում է ճիշտ ընտրել առարկաները և անվանել դրանք: Այնուհետև երեխաներն ինքնուրույն կատարում են առաջադրանքը:

Գունավոր նկարներ

Անհրաժեշտ պարագաներ՝ երկու մասի կիսված 10 քարտ, որոնք ներկված են երկու գույնով (կարմիր և կանաչ, կանաչ և դեղին, դեղին և կապույտ, կապույտ և սպիտակ, սպիտակ և կարմիր, կարմիր և կապույտ, կանաչ և նարնջագույն, կարմիր և դեղին, կապույտ և դեղին, սպիտակ և դեղին), 10 գունավոր նկար, որոնց վրա պատկերված է կանաչ խնձորենի՝ կարմիր խնձորներով, կանաչ մարգագետին՝ դեղին ծաղիկներով, սպիտակ նավակներ՝ կապույտ գետում, շտապօգնության սպիտակ մեքենա՝ կարմիր խաչով, կապույտ գետակ՝ դեղին ավազե ավերով, կտրտված հավկիթ (դեղնասպիտակ), կանաչ ծառ՝ նարինջներով, կարմիր ձկնիկներ՝ կապույտ ջրում, աշնանային ծառ՝ դեղին և կարմիր տերևներով, դեղին դաշտ՝ կապույտ մանուշակներով:

Խաղի նպատակը՝ զարգացնել ուշադրությունը և ամրակայել գույների իմացությունը:

Խաղի ընթացքը: Ուսուցիչը երեխաներին գունավոր նկարներ է բաժանում և խնդրում ուշադիր նայել ու ասել, թե ինչպիսի գույներով են դրանք նկարված: Բացատրում է, որ խաղալու են լոտո: Ուսուցիչը ցուցադրում է որևէ գունավոր քարտ: Այն երեխան, ում մոտ նման գույներով նկար կա, պետք է բարձրացնի ձեռքը և վերցնի այդ քարտը: Եթե երեխան սխալվում է, ուսուցիչը հարցնում է, թե ինչ գույներ են օգտագործվել նկարում, և պարզում է քարտի գույները: Օրինակ՝ ուսուցիչը ցուցադրում է կարմիր և կանաչ գույներով քարտ: Դա պետք է վերցնի այն երեխան, ում մոտ կարմիր խնձորներով կանաչ խնձորենու նկար կա:

Ինչից է պատրաստված

Անհրաժեշտ պարագաներ՝ սկուտեղ, տուփ, տարբեր նյութերից պատրաստված առարկաների հավաքածու (փայտե, ռետինե, մետաղյա, պլաստմասսե, ապակյա):

Խաղի ընթացքը: Մանկավարժը գրուցում է երեխաների հետ՝ պարզելով նրանց գիտելիքները շրջակա աշխարհի, մեզ շրջապատող առարկաների մասին, թե ինչ նյութերից են պատրաստվում այդ առարկաները և այլն: Ուսուցիչը հիշեցնում է երեխաներին նյութերի անվանումները և ցույց տալիս համապատասխան ժեստերը: Երեխաները պետք է շրջեն սենյակում և գտնեն առարկաներ, որոնք պատրաստված են տարբեր նյութերից. օրինակ՝ մետաղից պատրաստված առարկան դնել մետաղյա սկուտեղի վրա, փայտե առարկան՝ փայտե տախտակի, պլաստմասսե առարկան՝ պլաստմասսե սկուտեղի վրա և այլն:

Խաղը կարելի է անցկացնել նաև այլ տարբերակով: Երեխաները պետք է փակ աչքերով ընտրեն առարկաները, շոշափեն և որոշեն, թե ինչ առարկա է (անվանեն) և ինչից է պատրաստված:

Ինչը որտեղ է աճում

Անհրաժեշտ պարագաներ՝ մեծ քարտեր, որոնց վրա պատկերված են անտառ, մարգագետին, այգի: Քարտերի ծայրերին կա 6 դատարկ վանդակ, որոնք նախատեսված են նկարների համար՝ փոքրիկ նկարներ, որոնց վրա պատկերված են ծառեր, թփեր, սնկեր, հատապտուղներ, միրգ, բանջարեղեն և այլն:

Խաղի ընթացքը: Երեխաներից յուրաքանչյուրն ստանում է տարբեր բնանկարներով մեծ քարտ: Ուսուցիչը ցույց է տալիս մեկ փոքրիկ նկար և հարցնում, թե ինչ է սա, որտեղ է այն աճում: Օրինակ՝ ցուցադրվում է խնձոր, և տրվում են նշված հարցերը: Երեխան պատասխանում է. «Սա խնձոր է, այն աճում է այգում՝ ծառի վրա»: Խաղի վերջում ուսուցիչն ընդհանրացնում է երեխաների գիտելիքները և կատարում հարցադրումներ. «Ի՞նչ է աճում անտառում», «Ի՞նչ է աճում այգիներում», «Ի՞նչ է աճում դաշտում», «Ինչպիսի՞ բույսեր գիտեք», «Ինչպիսի՞ մրգեր գիտեք» և այլն:

Ճանաչի՞ր համով

Անհրաժեշտ պարագաներ՝ երեխաներին ծանոթ մրգեր և բանջարեղեն (թարմ և թթու վարունգ, գազար, լոլիկ, սոխ, խնձոր, խաղող, սալոր կամ դեղձ, կիտրոն, երեք սկուտեղ):

Խաղի ընթացքը: Սկուտեղներից մեկի վրա դրված են ամբողջական, երկրորդի վրա՝ կտրտված մրգեր և բանջարեղեն: Մանկավարժը հերթով իր մոտ է կանչում յուրաքանչյուր երեխայի և առաջարկում ուշադիր նայել, թե ինչ մրգեր ու բանջարեղեն կա սկուտեղների վրա: Այնուամենայնիվ փակում է երեխայի աչքերը, մի կտոր միրգ կամ բանջարեղեն դնում անձեռոցիկի վրա ու տալիս երեխային: Երեխան պետք է ուտի միրգը կամ բանջարեղենը և ըստ համի կամ հոտի որոշի ու անվանի այն: Այնուհետև երեխայի աչքերը բացում են և առաջարկում գտնել այդ միրգը կամ բանջարեղենը սկուտեղի վրա: Երեխան պետք է բացատրի, թե ինչպիսին է այն՝ փափրկ, թե՞ պինդ, քաղցր, թե՞ թթու: Խաղն ավարտվում է բոլոր մրգերի ու բանջարեղենի թվարկումով և ընդհանրացնող անուններ ասելով:

Կենդանաբանական այգում

Անհրաժեշտ պարագաներ՝ խաղալիքներ կենդանիների պատկերներով՝ գայլ, ընձուղտ, փիղ և այլն, վանդակներով քառանկյունների, կառուցողական խորանարդիկների կաղապարներ:

Խաղի ընթացքը: Մանկավարժը երեխաներին առաջարկում է օգնել կենդանիներին՝ գտնելու իրենց վանդակները: Մանկավարժը երեխաներին ասում է, որ գազանանոցում երեք տարբեր ազատ վանդակներ կան. մեկը՝ փոքր և ցածր, երկրորդը՝ մեծ և բարձր, երրորդը՝ մեծ և երկար: Երեխաները պետք է օգնեն կենդանիներին՝ տեղավորվելու հարմար վանդակներում, և պատմեն, թե որ կենդանուն ընտել են տեղավորել:

Եթե երեխաները դժվարանում են, նրանց տրվում են կառուցողական նյութեր, և առաջարկվում է ինքնուրույն պատրաստել վանդակներ ու տեղավորել խաղալիք կենդանիներին՝ նապաստակ, ընձուղտ, կոկորդիլոս: Գործողությունը կատարելուց հետո երեխաները պետք է բացատրեն, թե որ կենդանիներին ընտել վանդակում են տեղավորել:

ՅԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԴԱԾ ԽԱՂԵՐ

ՈՂՆԻՆ և Կատուն

Անհրաժեշտ պարագաներ՝ երկու թեմատիկ նկար, որոնցից առաջինը ներկայացնում է ողնի, որը խնձոր է ուտում, իսկ երկրորդում՝ ողնին խնձոր է ուտում է, իսկ հետևից մոտենում է կատուն:

Խաղի ընթացքը: Մանկավարժը երեխաներին առաջարկում է դիտել նկարները և համեմատել: Երեխաները պետք է ժեստերի լեզվով վերարտադրեն թեմատիկ նկարները: Նկարները վերլուծելուց հետո մանկավարժը պատմում է.

Մի անգամ մեր բակում ողնի հայտնվեց: Նա խնձոր գտավ և սկսեց ուտել: Ողնու հետևից դանդաղ, գաղտնի մոտենում էր կատուն: Նա թռավ ողնու վրա և ծակեց թաթը: Կատուն մյավեց ու փախավ: Իսկ ողնին խնձորը հագրեց իր փշերի վրա ու գնաց անտառ:

Այնուհետև մանկավարժը հարցնում է երեխաներին, թե ինչու կատուն մյավեց ու փախավ, և ո՞վ գտավ խնձորը ... և այլն: Եթե երեխաները դժվարանում են պատասխանել, ուսուցիչը դիտել է տալիս նկարները, կրկին ժեստերով պատմում դրանց բովանդակությունը, այնուհետև երեխաներին առաջարկում է պատմել բառային խոսքով՝ հիմնվելով նկարների վրա:

Մաքրուհիները

Անհրաժեշտ պարագաներ՝ երկու թեմատիկ նկար, որոնցից մեկի վրա պատկերված են աղջիկներ: Նրանցից մեկը փոշեկուլով մաքրում է գորգը, մյուսը սրբում է կահույքի փոշին, երրորդը լվանում է ափսեները: Նրանք միմյանցից տարբերվում են հագուստով և մազերի գույնով: Իսկ երկրորդ նկարում նույն աղջիկները տիկնիկներով խաղում են գորգի վրա:

Խաղի ընթացքը: Մանկավարժը երեխաներին առաջարկում է ուշադիր դիտել և հիշել առաջին նկարը, որտեղ աղջիկները մաքրում են սենյակը: Այնուհետև ուսուցիչը ծածկում է այն և երեխաներին առաջարկում կարդալ պատմվածքը.

Մայրիկը գնաց աշխատանքի: Աղջիկները՝ Լիլիթը, Տաթևը և Անին, մնացին տանը: Նրանք որոշեցին օգնել մայրիկին՝ հավաքել սենյակը: Լիլիթը փոշեկուլով մաքրում էր գորգը, Անին լվանում էր ափսեները, իսկ Տաթևը սրբում էր կահույքի փոշին: Երբ մայրիկը վերադարձավ տուն, ամեն ինչ շատ մաքուր էր: Աղջիկները հանգիստ նստել էին գորգի վրա և խաղում էին տիկնիկներով:

Երեխաները դիտում են երկրորդ նկարը, որտեղ աղջիկները խաղում են: Ուսուցչի առաջադրանքով երեխաները երկրորդ նկարում պետք է գտնեն այն աղջկան, ով լվանում էր ափսեները: Երբ գտնում են, ուսուցիչը հարցնում է, թե ինչպես իմացան, որ դա Անին է: Երեխան պետք է հիմնավորի իր պատասխանը, նկարագրի աղջկան և պատմի նրա մասին: Դժվարանալու դեպքում պատմվածքը նորից վերարտադրվում է ժեստերի լեզվով՝ ուշադիր դիտելով նկարները:

ԲԱԺԻՆ 6


ԲԱՌԱՇՆՐԹԱՆԵՐ ԵՎ ԽԱՉԲԱՌԵՐ

Լրացրո՛ւ բառաշղթան նկարների օգնությամբ:

Աշակերտը պետք է ցույց տա համարժեք ժեստը, ապա անվանի և գրի բառը:

ԲԱՈՒՇՐԹԱ 1

1
[]
[]
[]



2 [] [] [] [] 3 [] [] [] 4



7 [] [] [] 6 [] [] 5

[]
[]
[]
[]



[] [] [] [] [] []

ԲԱՆԱՇՐԹԱ 2

1 2

1

6

3 4

5 6

4



3

7

ԽԱԶԲԱՌ 1 «Գրենական պիտույքներ»

Լուծիր խաչբառը նկարների օգնությամբ.

2



3



4



ԽԱԶԲԱՌ 2




1




2





4





ԽԱԶԲԱՈՒ 3


1 


2 


3 

4 

5 

6 

7 

8 

1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				

ԽԱԶԲԱՌ 4

2

The crossword puzzle grid consists of green squares. The numbered starting points are:

- 1: 1 row, 1 column
- 2: 1 row, 4 column
- 3: 3 row, 4 column
- 4: 4 row, 1 column
- 5: 4 row, 4 column
- 6: 5 row, 2 column
- 7: 6 row, 1 column
- 8: 5 row, 5 column
- 9: 6 row, 4 column
- 10: 6 row, 5 column

Corresponding images for the numbered clues:

- 1: Peach
- 2: Orange
- 3: Pomegranate
- 4: Peach
- 5: Watermelon
- 6: Strawberry
- 7: Tomato
- 8: Cherry
- 9: Eggplant
- 10: Cabbage

Օգտագործված գրականության ցանկ

1. Խալաթյան Գ. Վ. Մատնախոսություն և ժեստորի լեզու: «Գիտություն և տեխնիկա». 1973. N12. էջ. 38-45
2. Խալաթյան Գ. Վ. «Ժեստերի լեզվի համառոտ բառարան», ձեռնարկ - 2001 թ.
3. Մանուկյան Ա.Վ. Լսողության խանգարում ունեցող նախադպրոցականների քանակը խոսքի զարգացումը խաղային գործընթացում: Ուսումնասիրողական ձեռնարկ. Եր. «Դավիթ Թագավոր», 2012
4. Богданова Т.Г. Сурдопсихология: Учеб. пособие для студ. высш. пед. учеб. заведений - М.: Академия, 2002. - с. 3-203
5. Дашьян А. В. Исследование эффективности рекомендуемых методов и средств по формированию словесно-жестового двуязычия. // Специальная педагогика и психология. Сборник научно-методических статей. Ереван. Зангак-97. 2007.- С.118-121.
6. Дашьян А. В. Влияние словесно-жестового двуязычия на развитие памяти и внимания глухих детей. //Специальная педагогика и психология. сборник научно-методических статей. Ереван. Зангак-97. 2009. - С.83-87.:
7. Дашьян А. В. Сравнительный анализ национальных жестовых отдельных стран мира „Педагогическая мысль,, 3-4. 2010. Зангак -97.- с.24-29.
8. Зайцева Г.Л. Жестовая речь. Дактилология: Учеб. для студ. высш. учеб. заведений -- М.: Гуманит. изд. центр ВЛАДОС, 2000. - 192 с. - (Коррекционная педагогика)
9. Зайцева Г.Л. Жестовая речь. Дактилология, Учебное пособие Издательство «Загрой», Москва 2001г., 172 с.
10. Сурдопедагогика: учебник для студ. высш. пед. учеб. С90 заведений / [И.Г. Багрова и др.]; под ред. Е.Г. Речицкой. - М.: Гуманитар. изд. центр ВЛАДОС, 2004. – 655 с. – (Коррекционная педагогика).
11. Чтение как цель и средство в системе дошкольного обучения глухих [Текст] / Б.Д. Корсунская // Дефектология. - 2007. - 1. - С. 39-47.
12. Brennan M. Grammatical processes in British sign language. – In; Perspectives on British sign language and deafness / Ed. By B Woll, J. Kyle, M. Deuchar. London, Lingstok Press, 1981
13. Prillwitz S. Zum Zusammenhang von Kognition, kommunikation und sprache mit Bezug auf die Gehorlosenproblemaik. – Stuttgart, 1982.

ԱՆԱՐԻՏ ԴԱՇՅԱՆ

**Չլսող երեխաների խոսքի և հաղորդակցման
զարգացումը ժեստաբառային երկլեզու
ուսուցման մեթոդով**

Ուսումնամեթոդական ձեռնարկ



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am